ներ՝ հազուագիւտ և ազնուացրած պտղատու ծառերով և վազերով։ Բայց այդ ազնիւ ծառերից գոնէ մի հատ ոչ ոք չի կարել կամ արմատախիլ չի արել մինչև ցարդ՝ նրանց մշակող տէրերին վնասելու դիտաւորութեամբ։ Միայն այս կողմից կարելի է հետևել Խրիմցի ժողովրդների բարի օրինակին, չնայած, որ այնտեղ էլ թէև մահմեդական թուրքեր և թաթարներ շատ կան, բայց Կովկասի թուրքերի պէս անխիղճ մարդասպանութիւն, գողութիւն, աւազակութիւն և սոսկալի բարբարոսութիւններ չեն անում նրանք»։ Ընթերցող, երևակայեցէք իմ անմխիթար դրութիւնը. համեմատական օրինակներ բերելուց յետոյ բարեկամներից ոմանք ասում էին իմ ականջիս. «Տէր-տէր ջան, այդպիսի բաներ մի ասիր մեր միամիտ ժողովրդի մօտ, ապա թէ ոչ՝ կասեն այնքան քաղաքներ ու աշխարհներ տեսած քահանայ մարդ սուտ և անհաւատալի բաներ է պատմում մեզ։ Բայց եթէ ձեր պատմածները ճիշտ լինին, այն ժամանակ կարելի է ասել, որ Խրիմը մի դրախտ է և նրա բնակիչներն էլ կատարեալ հրեշտակներ են. երանի՜ նրանց, եթէ այդպիսի խաղաղ երկրում են ապրում»։

Ուտիացոց աշխարհի ընդհանրապէս բոլոր ազգաբնակութեանց և մասնաւորապէս Ջոռոյ, Միրզաբէկլու, Սուլթան-Նուխու և մասամբ Նիժ գիւղաքաղաքի խաղաղ և աշխատասէր երկրագործ ժողովուրդների համար սոսկալի պատիժ ու պատուհաս են եղել և են Հայից դարձած Բուժ գիւղի հարուստ և զօրաւոր թուրք բէկերը, որոնցից